ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

16.04.2021թ. թիվ 32-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-019-0064-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Որոշում եմ՝

1.Օրենքի ուժով 06-019-0064-0014 ծածկագրի տակ գտնվող 0.25026 հա փաստացի օգտագործվող բնակավայրերի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել Ռոբերտ Լյովայի Առաքելյանի /ծնվ.1964թ/ սեփականության իրավունքը, հիմք՝ հողերի բարեփոխման և սեփականաշնորհման հանձնաժողովի 28,08,1991թվականի թիվ 02 որոշում:
2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ, հողամասում առկա է կիսակառույց տուն, որը ենթակա է պետական գրանցման որպես ինքնակամ կառույց:
3.Հողամասի սահմանները որոշվում են «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Վերոնշյալ անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 9 փողոց, թիվ 8 փոստային հասցե:
5.ՈՒԺը կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ղեկավարի 25,03,2021թվականի թիվ 22-Ա որոշումը:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

19.04.2021թ. թիվ 33-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 2021 թվականի բյուջեի բաժին 6, խումբ 3, դաս 1, 4269 հոդվածով նախատեսված միջոցներից 200000 դրամ չորրորդ եռամսյակից տեղափոխել երկրորդ եռամսյակ, և 4251 հոդվածով նախատեսված միջոցներից 200000 դրամ երկրորդ եռամսյակից տեղափոխել չորրորդ եռամսյակ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20.04.2021թ. թիվ 34-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.04.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի ղեկավարի 08,04,2021 թվականի թիվ 28-Ա որոշման 2-րդ կետում կատարել փոփոխություն՝ <<38 փողոցի թիվ 12 փոստային հասցե>>-ի փոխարեն կարդալ <<38 փողոցի թիվ 15 փոստային հասցե>>:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ